ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ, Անդրանիկի ժամանակը, *գիրք Ա, Երևան, Կախսա հրատարակչություն, 1996, 751 էջ, գիրք Բ, Երևան, 1996, 829 էջ։*

Զորավար Անդրանիկի մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ, վեպեր, պատմվածքներ, հիշողություններ, ստեղծվել են երգեր, նրա պայծառ հիշատակին կանգնեցվել են բազմաթիվ կոթողներ։ Սակայն այն ամենը, ինչ ստեղծվել է ազգային մեծագույն հերոսի մասին, կարծես թե բավարար չէ նրա հայրենասիրական ոգին ու գործունեությունը բնութագրելու համար։

Այդ բնագավառում, հիրավի, լուրջ աշխատանք է կատարել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը։ Նա գրել ու հրապարակել է 1580 էջանոց երկհատորյակ՝ «Անդրանիկի ժամանակը» վերտառությամբ։

Այդ աշխատությունն իր բովանդակությամբ, հարյուրավոր նորահայտ փաստաթղթերով, պատմագիտական, քաղաքագիտական ու ռազմագիտական վերլուծություններով ծանրակշիռ ներդրում է պատմագիտության մեջ։ Այս գնահատականը լիովին հիմնավորվում է, երբ ուշադիր ընթերցում ես մեծածավալ աշխատության յուրաքանչյուր էջ։ Հեղինակը երկար տարիներ աշխատել է Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Օդեսայի, Թբիլիսիի, Բաքվի ու Երևանի արխիվներում, հայտնաբերել է միանգամայն նոր վավերագրեր Զանգեզուրում, Արցախում, մասնավորապես Նախիջևանում զորավարի ծավալած ռազմաքաղաքական գործունեության մասին, որոնց մեծ մասը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Կիլիկիայի հայերի ազատագրական պայքարին զորավարի ցուցաբերած աջակցությանը վերաբերող նյութերը։

Հատկանշական է, որ երկու հատորում ներառված են ոչ միայն Անդրանիկի կյանքի ու գործունեության 62 տարիները, այլ նաև նրա անվան հետ առնչվող իրադարձությունները, որոնք կազմում են մի ամբողջ դարաշրջան։

Աշխատության մեջ տրված է ազգային հերոսի համակողմանի բնութագիրը։ Հեղինակը ոչ միայն բարեխղճորեն մատնանշել է Անդրանիկի մասին գրված ու հրատարակված գրեթե բոլոր փաստաթղթերը, մենագրությունները, հիշողությունները, հոդվածները, այլև օբյեկտիվորեն վերլուծել է դրանք ու գնահատել ըստ արժանվույն։ Առանց տարակուսանքի կարելի է ասել, որ նրա աչքից չի վրիպել ոչ մի հեղինակ։ Հր. Սիմոնյանը հանգամանորեն լուսաբանել է հեղափոխական պայքարին և հայ ազատագրական ինքնապաշտպանական շարժմանը Անդրանիկի զինվորագրման բոլոր հիմնական կողմերը։

Հեղինակր պատկերավոր ներկայացնում է հայ ազատագրական շարժման փայլուն էջերը, Անդրանիկի տեղն ու դերը այդ մեծ պայքարի հորձանուտում։

Գրքում նորահայտ փաստերով համակողմանի բնութագրվում է Սասունի հերոսապատումը։ Այդ ավանդական հայկական հողը 1904 թ. մայիսի վերջին պաշտպանել էին շուրջ 10 հազար թուրք զինվոր ու 7 հազար քրդական զինված խուժան։ Հայ կտրիճների թիվը տասնապատիկ քիչ էր, սակայն նրանց խիզախությանը գումարվում էին տաղանդավոր զորապետների աննկուն կամքն ու հնարամտությունը։

Սասունում Անդրանիկն իր զինակիցներով ու ֆիդայիներով բազմաթիվ ինքնապաշտպանական մարտեր մղեց թուրքական զինված ուժերի և հրոսակախմբերի դեմ՝ մեծ վնաս պատճառելով նրանց, սակայն ուժերի հարաբերակցությունը, թշնամու թվական կազմի ու զենքի հսկայական գերազանցությունը ի վերջո հանգեցրին ազատամարտիկների պարտությանը։

Գրքում ցույց են տրված Անդրանիկի քաղաքական հայացքները, մասնավորապես հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման տեսանկյունից։ Ընդգծված է, որ Անդրանիկը համոզված էր այն կարևոր հարցում, որ հայ հեղափոխական շարժումը ունի մի գլխավոր և ուժեղ թշնամի՝ օսմանյան բռնապետությունը, և բնավ հարկ չկա հանձին ռուսական պետության, ձեռք բերել մի ուրիշ թշնամի ևս։ Այս տեսակետից միանգամայն տեղին են բերված Անդրանիկի դիպուկ ու պատկերավոր հետևյալ խոսքերը. «Արյուն ձեր ի գլուխ ձեր։ Երեք ինչ որ կուզեք, բայց Ռուսիո դռները մեզի դեմ մի փակեք։ Մենք շատ թշնամի ունենք արդեն, Ռու-

սիան ալ թշնամի մի ընենք մեզի, և պատճառ մի տաք, որ Կովկասի հայությունն ալ Թրքահայոց վիճակին ենթարկվի» (հ. 1, էջ 260)։ Միանգամայն ճշմարիտ էր ազգային հերոսը։

Հեղինակի աչքից չի վրիպել Անդրանիկի վերաբերմունքը ազգային միասնության խնդիրներին և հայ քաղաքական կուսակցություններին։ Այդ առնչությամբ գրքում բերված են Անդրանիկի հետևյալ բնորոշ խոսքերը. «Իմ կոչն է բոլոր հեղափոխական ընկերներուս, բոլոր հայ ժողովուրդին, կուսակցական ինչ դավանանքի ալ պատկանին—ժամանակ է, որ սթափվինք, սեղմենք մեր շարքերը. ազատության գործը շատ դժվարին գործ մը դարձած է. մեծ ուժի կը կարոտի, ազգովին քով քովի գանք և այդ ուժը կազմենք. քաջությունը, դրամը, զենքը չէ, որ կը պակսի մեզի, այլ կամքը. զորացնենք մեր կամքը և վստահ ըլլանք, որ կը փրկվինք» (հ. 1, էջ 275)։

Ինչպես հայտնի է, 1908 թ. հուլիսին երիտթուրքերը իշխանությունը վերցնում են իրենց ձեռքը։ Իսկ ի՞նչ վերաբերմունք ուներ Անդրանիկն այդ հեղաշրջման և երիտթուրքերի նկատմամբ։ Այդ հարցին պարզ ու հստակ պատասխանում է գրքի հեղինակը։ Նա գրում է. «Անդրանիկը ոչ միայն խանդավառ չէր երիտթուրքերի հաղթանակով, այլև դրա մեջ տեսնում էր ահավոր մի բան։ Բնությունից խելոք այդ մարդը կարողանում էր թափանցել երևույթների խորքերը և տեսնել այն, ինչը ուրիշները չէին տեսնում։ Նա ճիշտ էր կռահում իրադարձությունների հետագա ընթացքը։ Այո՛, Անդրանիկը չէր հավատում երիտթուրքերի խոստացած ազատություններին և արևմտահայության նկատմամբ թուրքական ավանդական բնաջնջման քաղաքականության փոփոխմանը։ «Ոչ մեկ թուրքի չեմ կրնար հավատալ, եթե անիկա երկնքեն իսկ իջած ըլլա»—ասում էր նա (հ. 1, էջ 219)։

Գրքում հանգամանորեն լուսաբանված են Անդրանիկի սխրագործությունները Բուլղարիայում՝ Բալկանյան պատերազմի օրերին։

Աշխատության «Մեծ աշխարհամարտի ռազմադաշտերում» գլխում բազմակողմանիորեն պատկերված են Բուլղարիայից Անդրանիկի անցնելը Ռուսաստան և այնուհետև տաղանդավոր զորավարի գլխավորությամբ տեղի ունեցած ինքնապաշտպանական հերոսամարտերը։

Հեղինակը լիովին ճշմարիտ է, երբ նշում է, որ «առաջին համաշխարհային պատերազմում Անդրանիկի մղած բոլոր մարտերից ամենափայլունը Դիլմանի կռիվն էր, որի ընթացքում հայ կամավորները խիզախության և տոկունության աննախադեպ օրինակներ տվեցին» (հ. 1, էջ 435)։

Դիլմանի ճակատամարտը տեղի ունեցավ 1915 թ. ապրիլի 18-ին և ավարտվեց ռուսհայկական ուժերի փայլուն հաղթանակով։ Ճակատամարտի մասնակից գեներալ Թ. Նազարբեկովը արձանագրել է. «Դիլմանի համբավավոր ճակատամարտը շահողը զորավար Անդրանիկն էր»։ Խալիլի բանակի կորուստները կազմեցին 3000 սպանված և 1500 վիրավոր։ Միայն Անդրանիկի գունդը ոչնչացրել էր թշնամու 700 զինվոր։ Հայ կամավորների կորուստները ընդամենը 30 սպանված և 50 վիրավոր էին (հ. 1, էջ 446)։

«Դիլմանի ճակատամարտը հայոց զենքի փառահեղ սխրագործություններից մեկն է։ Այն մեկ անգամ ևս ապացուցեց, որ զինված հայ մարդը կարող է անկարելին կարելի դարձնել։ Դիլմանի ճակատամարտը նաև հայ-ռուսական զինադաշինքի և զինվորների համատեղ գործակցության լավագույն օրինակ է։ Ինչպես Սարիղամիշի ճակատամարտը, այնպես էլ Դիլմանի մեծ կռիվը վճռական նշանակություն ունեցավ դեպի Կովկաս թուրքերի արշավանքը խափանելու համար։ Հօդս ցնդեց երիտթուրքերի ղեկավարության որոճած հերթական պանթուրքական ծրագիրը» (հ. 1, էջ 446)։ Այսպես է բնութագրել Դիլմանի ճակատամարտը Հր. Սիմոնյանը։ 1916 թ. փետրվարի 2-ին զորավար Թ. Նազարբեկյանի զորքը նվաճեց Մուշը։ Դրանից հետո նախապատրաստվում էր Բիթլիսի գրավումը։ Այս գործում մեծ հնարամտություն ու խիզախություն ցուցաբերեց Անդրանիկը։ «Բիթլիսը Անդրանիկի երկրորդ մեծ հաղթանակն էր՝ Դիլմանից հետո»,—գրում է հեղինակը (հ. 1, էջ 509)։

Անդրանիկի գործունեության մեջ կարևոր տեղ է գրավել «Հայաստան» թերթը, որի առաջին համարը լույս է տեսել 1917 թ. ապրիլի 16-ին։ Այն իր գոյության ողջ ընթացքում հիմնականում խմբագրել է Վահան Թոթովենցը։ Այդ նոր պարբերականը իրավամբ համարվում էր «Անդրանիկի թերթ», որի գլխավոր հոգսը արևմտահայության ողջ մնացած զանգվածների փրկությանը նպաստելն էր, ազգային միասնության ամրապնդման խնդիրը։ Թերթի գաղափարական բովանդակության համար բնորոշ էր Ռուսաստանի՝ իբրև բարեկամի նկատմամբ վերաբերմունքի պարզ ու հստակ դրսևորումը։ Թերթը համարից համար այն միտքն էր զարգացնում,—նշել է Հր. Սիմոնյանը,—որ Ռուսաստանը ոչ միայն հայության պատմական բարեկամն է, այլև նրա գալիքի երաշխավորը» (հ. 1, էջ 561)։ Այս մեջբերումը պատահական

չէ, դա պատմության տրամաբանությունն է։ Ընդունելով այդ տրամաբանությունը, ուսումնասիրողն իրատեսորեն ասում է իր խոսքը. «Կովկասի Բախարների (ադրբեջանցիների—Ս. Ս.) հենարան Թուրքիան էր, վրաները մեծ հույսեր էին կապում դերմանացիների հետ, իսկ հայերի միակ հույսը Ռուսաստանն էր, որի ներկայությունը միայն կարող էր նրանց փրկել վերահաս աղետից» (հ. 1, էջ 688)։

Գրքում համակողմանիորեն մեկնաբանված են «Թուրքահայաստանի մասին» դեկրետին վերաբերող հարցերը, ցույց է տրված Անդրանիկի վերաբերմունքը այդ փաստաթղթին։ Իրողություն է, որ դեկրետը մեծ տպավորություն է թողնում Անդրանիկի վրա, և նա այդ ժամանակվանից դրական շրջադարձ է կատարում դեպի բոլշևիկյան Ռուսաստանը։ Ահա թե ինչ է գրում նա «Հայաստան» թերթում. «Պոլշևիզմն է մեր կարծիքով, որ կարող պիտի ըլլա հավասարակշռություն ստեղծել կովկասյան այլազան ցեղերու մեջ։ Պոլշևիզմը որքան շուտ վերցնե Կովկասը, այնչափ շուտ կը հարթվին կարդ մը խնդիրներ, որոնք օրվա հրամայական հարցեր դարձած են, այդ կարգի հարցերեն է ֆրոնտի պաշտպանության հարցը։ Բոլորիս հայտնի է, որ Բեթրոկրատի Ժող. Քոմիսարներու կառավարությունը տեղերի հրատարակեց Հայաստանի ինքնորոշման համար, սակայն այդ տեղերը իր ուժը ալ ավելի ցույց կուտա, երբ պոլշևիկները տեր ըլլան Կովկասին։ Անոնք պետք եկած պատեհությունը պիտի ունենան գործնական կերպով աջակցել հայ ժողովրդի արդար իրավունքը գործադրելու համար, ինչպես և մյուս ժողովուրդներուն, և պետք եկած պաշտպանությունը ցույց տալ կովկ(ասյան) ֆրոնտին, Թուրք բարբարոսության դեմ։

Ահա թե ինչու համար է հարկավոր պոլշևիկներու հաղթանակը Կովկասի մեջ» (հ. 1, էջ 708)։

Հր. Սիմոնյանի աշխատության երկրորդ հատորն սկսվում է 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին Արևելյան Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում ստեղծված իրադրության վերլուծություններով ու դորավար Անդրանիկի գործունեության լուսաբանմամբ։

Գրքում բացահայտված է հետաքրքրություն ներկայացնող մի կարևոր հանգամանք։ 1918 թ. Թիֆլիսում էին գտնվում Արևմտահայաստանի կոմունիստական կուսակցության զինված ուժերը, որոնց թիվն անցնում էր շուրջ 5000-ից։ Ցնցված վրաց մենշևիկյան գործիչները հալածանքի՝ ու ահարեկչական գործողությունների էին դիմում կոմունիստական ուժերի ու հայ զինվորականների նկատմամբ, կուսակցության կենտկոմը որոշել էր Անդրանիկի տրամադրության տակ դնել ավելի քան 2000 զինվոր։

Գրքում հետաքրքիր փաստաթղթերով ցույց է տրված Անդրանիկի տեսակետը Հայաստանի անկախության և Բաքումի պայմանագրի նկատմամբ։ Զորավարը լավ էր հասկանում արևելահայության հերոսամարտերի և մասնավորապես հայոց նոր Ավարայրի՝ Սարդարապատի ճակատամարտի բախտորոշ նշանակությունը, Հայաստանի առաջին հանրապետության հռչակման և անկախության իմաստը։

Ազգային հերոսը սկզբունքորեն ու համառորեն չընդունեց Բաքումի պայմանագիրը և մերժելով հանրապետության ղեկավարների կարգադրությունները, որոշեց հեռանալ Հայաստանից։

1918 թ. հունիսի 6-ին իր զորամասով ու գաղթականներով Անդրանիկը դուրս եկավ Դիլիջանից և սկսեց իր ճանապարհը Նոր Բայազետ-Դարալագյազ-Նախիջևան-Ջուլֆա-Խոյ-Սալմաստ-Համադան-Բաղդադ ուղղությամբ։

Ջերմ ընդունելության արժանանալով Նոր Բայազետում, 1918 թ. հունիսի 17-ին, նա իր զորամասով ու գաղթականներով մտնում է Նախիջևանի գավառ, հունիսի 18-ին Նախիջևան քաղաք, որտեղ էլ կարճ ժամանակով դիխավորում է այդ գավառի հայության մահու և կենաց պայքարը։

Նախիջևանում գտնվելու ժամանակ Անդրանիկը կատարեց համարձակ ռազմաքաղաքական քայլ՝ Նախիջևանի գավառը հայտարարելով Ռուսաստանի Հանրապետության անբաժան մաս։ Այդպիսի բովանդակությամբ նա հեռագիր է ուղարկում Ստեփան Շահումյանին։ Այս փաստաթղթերի վերաբերյալ գրքում բերված են նորահայտ նյութեր ու նկատառումներ, ինչպես նաև Ստ. Շահումյանի պատասխան հեռագիրը և ռուսական պաշտոնական մամուլի բարձր գնահատականները Անդրանիկի ռազմաքաղաքական գործունեության վերաբերյալ։

Հր. Սիմոնյանն այն կարծիքն է հայտնում, որ, հավանաբար, Լենինը համակրանք ու դրական վերաբերմունք է ունեցել Անդրանիկի նկատմամբ։ Այդ կապակցությամբ նա գրում է. «Մեզ հայտնի չէ, թե Շահումյանի հեռագրին Լենինը պատասխանել է, թե ոչ, բայց անկասկած է, որ վերջինս առանց տատանվելու համակրանք ու դրական վերաբերմունք է դրսևորել Անդրանիկի գործողությունների նկատմամբ։ Այդ մասին են վկայում Մոսկվայի՝ ջերմ

արձագանքը, կառավարական շրջանների շահագրգիռ հետաքրքրությունը, որը մասնավորապես արտահայտվեց ինչպես կենտրոնական պաշտոնական մամուլում, այնպես էլ Բաքվի բոլշևիկյան մամուլի էջերում՝ Անդրանիկին տրված խիստ դրական գնահատականներում» (հ. 2, էջ 267)։

1918 թ. ամռանը Թուրքական մեծաթիվ ուժեր ներխուժում են Նախիջևանի գավառ։ Դրությունը օրհասական էր։

1918 թ. հուլիսի 20-ին Անդրանիկն իր զորամասով գաղթականության հետ ուղևորվում է Զանգեզուր։

Աշխատության երկրորդ հատորի 9-րդ գլուխը նվիրված է Սյունյաց աշխարհում Անդրանիկի գործունեությանը։ Հեղինակը մատնանշում է, որ Անդրանիկ Օզանյանի հերոսական կենսագրության մեջ առանձնակի տեղ ունեն Զանգեզուրում նրա անցկացրած դժվարին ութ ամիսները, երբ իր զորամասով թշնամու ոտնձգություններից պաշտպանում էր Հայաստանի այդ լեռնավայրը։ Հարկ է ասել, որ Հր. Սիմոնյանը Անդրանիկի զանգեզուրյան գործունեության բոլոր հիմնական կողմերը լուսաբանել է նորահայտ աղբյուրներով, հանգամանք, որն աշխատությունը դարձնում է առավել գիտական, հետաքրքիր ու յուրահատուկ։

Գրքում որոշակի տեղ է հատկացվել Բաքվի 26 կոմիսարների եղերական վախճանին և այդ առնչությամբ Ստեփան Շահումյանի նկատմամբ Անդրանիկի վերաբերմունքին։ Բերված են Անդրանիկի այն խոսքերը, որ Շահումյանը առաջին հերթին «շատ լավ հայ էր»։ Հր. Սիմոնյանը գրում է, որ զորավարը գա ասել էր, որևէ առարկություն չհանդուրժող շեշտով, հետո անդրադարձել էր նրա կատարած գործերին ու թափած ջանքերին, որոնք, եթե հաջողություն ունենային, հայությունը մեծապես շահած դուրս կգար կովկասյան իրադարձություններից, այլ ոչ թե հակառակը, որ կատարվեց» (հ. 2, էջ 383)։

Անդրանիկին շատ էր մտահոգում Ղարաբաղի ճակատագիրը։ Չէ՞ որ Թուրքական դորքերը գրավել էին Շուշին և անցել էին գավառների նվաճմանը։ Արխիվային նոր նյութերի հիման վրա Հր. Սիմոնյանը նշում է, որ «օրեր շարունակ Անդրանիկի միտքը զբաղված էր Ղարաբաղի վրա գնալու խնդրով։ Դեպի Ղարաբաղ անցման նպատակը միայն հայության աղատագրելը չէր։ Անդրանիկը մտորում էր, թե հնարավո՞ր է արդյոք այնտեղից գնալ Բաքվի վրա, որը Թուրքերը գրավել էին...» (հ. 2, էջ 429)։

Ղարաբաղի հայությանն օգնելու նպատակով 1918 թ. հոկտեմբերի 30-ին հարվածող զորամասի ստորաբաժանումները գորիսեցիների գինված խմբերի հետ շարժվում են դեպի Ղարաբաղ։ Անդրանիկի զորքի հաջողությունները փայլուն էին։ Գրավում են Մարքիզ լեռը, և նրա գագաթին ծածանվում է զորքի կարմիր դրոշակը։ Այնուհետև ջախջախիչ հարվածներ է հասցվում Թուրք-թրքական ուժերին Զարուղ և Հաղարո գետերի ավազաններում։ Դրանից հետո զորքը պետք է շարժվեր ու մտներ Շուշի։ Ցավոք, դա տեղի չունեցավ, և զորավարի սկսած ռազմերթը անավարտ մնաց։ Դրա պատճառը, ինչպես նշում է գրքի հեղինակը, Ադրբեջանի կառավարության և Բաքվի անգլիական օկուպացիոն իշխանությունների ձեռնարկած դանդաղ հակամիջոցներն էին։

Հր. Սիմոնյանն այն կարծիքն է հայտնում, որ «ենթարկվելով անգլիացիների ճնշմանը, զորավարը գործել է անուղղելի սխալ։ Այդ սխալը հետագայում շատ թանկ նստեց Ղարաբաղի հայության վրա։ Եթե Անդրանիկը լսեր «դաշնակիցներին», այլ Զարուղի ձորերը գրավելուց հետո ուսաց գնար ու մտներ Շուշի, ապա Լեռնային Ղարաբաղը Զանգեզուրի հետ կցված կլիներ Հայաստանին» (հ. 2, էջ 463)։

1919 թ. ապրիլի 13-ին Անդրանիկն իր զորամասով, շրջանցելով Երևանը, մտնում է Էջմիածին և ներկայանում Վեհափառ Հայրապետին։ Նա հայրենի երկրին հրաժեշտ է տալիս 1919 թ. ապրիլի 28-ին, Էջմիածնի Մայր տաճարի բակում։

Անդրանիկն իր մերձավորներով նույն օրը գնացքով մեկնում է Թիֆլիս, իսկ մի քանի օր անց, 1919 թ. մայիսի 7-ին Բաթումից նավով ուղևորվում է Եվրոպա։

Գրքում ժամանակագրական ձևով շարադրված են Անդրանիկի գործունեության արտաստմանյան էջերը (Եվրոպա, Ամերիկա)։

Եվ ահա, 1920 թ. գարնանը, Փարիզի ազգային պատվիրակությունը առաջարկում է Անդրանիկին Ամերիկայից վերադառնալ Եվրոպա և այնտեղից մեկնել Կիլիկիա՝ կազմակերպելու հայկական այդ երկրամասի պաշտպանությունը։ Ընդունելով առաջարկությունը, Անդրանիկը 1920 թ. հունիսի 25-ին Նյու-Յորքից մեկնում է Եվրոպա։ Սկզբում նա հանգրվանում է Մանչեստրում, այնուհետև մեկնում է Փարիզ և հանդիպումներ է ունենում Պողոս Նուբարի հետ։ Երկար ժամանակ չի անցնում, և Անդրանիկը Հայկ Բոնապարտյանի հետ ուղևորվում

է Կիլիկիա։ Ճանապարհին կանգ է առնում Իզմիրում։ Անդրանիկին չի հաջողվում մտնել Կիլիկիա այն պատճառով, որ ֆրանսիական զինվորական իշխանությունները համաձայնություն չեն տալիս։ 1920 թ. հոկտեմբերի 22-ին մեկնում է Եգիպտոս։ Հայտնի է, որ Եգիպտահայերը ոչ միայն մեծ խանդավառությամբ են ընդունում Անդրանիկին, այլ նաև հանձնում են մեծարժեք նվեր՝ ազամանդակուռ սուր։

1920 թ. վերջերին Անդրանիկը Եգիպտոսից նավով ժամանում է Մարսել, և այնտեղից մեկնում է Փարիզ։ Ստանալով տխուր լուր Արևելք-Հայկական պատերազմում Հայաստանի Հանրապետության բանակի պարտության և Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին, զորավարը երկար ժամանակ չէր հանդարտվում զայրույթից։

Այն բանից հետո, երբ Անդրանիկին չի հաջողվում մտնել Կիլիկիա, նա որոշում է երկար ժամանակով մեկնել Ամերիկա։ Դրանից առաջ, 1922 թ. մայիսի 15-ին Փարիզում Անդրանիկը ամուսնանում է Նվարդ Քյուրքճյանի հետ և նույն թվականի հուլիսի 5-ին «Օլիմպիկ» շոգենավով մեկնում Ամն։

Աշխատության մեջ լուսաբանված է Հայաստանի իրականությունը խորհրդային իշխանության պայմաններում, իսկ Անդրանիկը իր մտքով ու հոգով Հայաստանի հետ էր։ Զորավարը հատկապես ոգևորված էր այն ջանքերով, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը ձեռնարկում էր հայրենադարձության կազմակերպման ասպարեզում։

Անդրանիկը վերնականապես հիասթափվելով Հայկական հարցում Ամն-ի, Եվրոպական մեծ տերությունների, Ազգերի Լիգայի և էջմիածնի կոնֆերանսի դիրքորոշումներից, 1923 թ. ապրիլի 12-ին Ֆրեզնոյից Արշակ Զորանյանին գրած նամակում նշում էր, որ անհնարին է «դիպլոմատիայով Հայաստանը աղատել։ Հայ ժողովրդի փրկությունը,—ընդգծում էր նա,— ոչ թե հեռուներում պետք է փնտրել, այլ՝ Ռուսաստանի հետ դաշինքի մեջ» (հ. 2, էջ 741)։

Հր. Սիմոնյանը արդարացիորեն գրում է, որ Ռուսաստանի նկատմամբ այդ տեսակետը Անդրանիկը երբեք չփոխեց։ Նա գրքում բերում է զորավարի այն խոսքերը, որ «Առանց Ռուսիա պաշտպանության և հովանավորության, ներկայումս մեր ազգը գոյություն չի կրնար ունենալ» (հ. 2, էջ 741)։ Այո, Անդրանիկը գտնում էր, որ կովկասյան Հայաստանը, Խորհրդային մյուս հանրապետությունների հետ մի պետության մեջ միավորվելով, արդեն ապահովել է հայության ամենամեծ հատվածի գոյատևումը և առաջընթացը։ «Խորհրդային Հայաստանը պետք է Ռուսաստանի հետ ըլլա և ստանա անոր պաշտպանությունն ու աջակցությունը»,—շեշտել է զորավարը (հ. 2, էջ 742)։

Խորհրդային Հայաստանի նկատմամբ զորավարի ջերմ վերաբերմունքի և նվիրվածության արտահայտությունն հանդիսացավ նաև այն, որ 1926 թ. եգիպտահայերի խորհրդանշական նվերը՝ անպարտելի սուրը, նա հանձնում է Հայաստանի պատվիրակին՝ հանրապետության պատմության թանգարանում պահպանելու համար։ Այդ առթիվ Վիլյամ Սարոյանը գրել է. «Անդրանիկը չորս սերունդների թոռ կայծակին նվիրեց Խորհրդային Հայաստանին, որպեսզի հայ ժողովուրդն իր սերունդներին հաղորդակից անի, բարձր պահի հայ ժողովրդի դյուցազնությունը, որի մարմնացումն է Սասնա հերոսը» (հ. 2, էջ 746)։

Գրքի՝ «Վերջալույսին» վերնագրի տակ հեղինակն անդրադառնում է զորավարի առողջական վիճակին, որը գնալով վատթարանում էր։ Անդրանիկը վաղուց տառապում էր սուր հոդացավերով, որից դժվարվում էին սրտի անբավարար աշխատանքի երևույթները։ Այդ օրերին նրա մեջ բուռն ցանկություն էր առաջացել մեկնել Հայաստան և կյանքի մնացած մասը անցկացնել Հայրենիքում։

1927 թ. օգոստոսի 31-ին Զորավարը կնքեց իր մահկանացուն։

Վախճանին հասավ հայոց պատմության մեծագույն ռազմիկներից մեկի հերոսական կյանքը։ Հավերժության դիրքն էր անցնում փոթորկահույզ և մրրկածուփ մի հոգի, հանդուգն ու խիզախ մի էություն, հմայիչ մի առասպել։

Անդրանիկը թաղվեց Ֆրեզնոյի Արարատ գերեզմանատունը, սակայն նրա այրու խնդրանքով Զորավարի աճյունը տեղափոխվեց Փարիզ և 1928 թ. հունվարի 29-ին, Պեր Լաշեզ գերեզմանատունը տեղի ունեցավ երկրորդ հուղարկավորությունը։

Ավարտելով երկհատորյակը, Հր. Սիմոնյանը գրում է. «Վերջացավ մեր պատմությունը մի մարդու մասին, որը մի ամբողջ ազգի հպարտությունն է ահա մեկ դար շարունակ։ Հշերն են արժանանում այնպիսի բախտի, որին արժանացավ Անդրանիկը՝ իր լուսավոր անունը հավերժ թողնելով հայ ժողովրդի նոր և գալիք սերունդների սրտում» (հ. 2, էջ 791)։

Փաստորեն երկհատորյակի էջերում ներկայացված ու բնութագրված են XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ ազգային-ազատագրական շարժումները, դրանց գրգռապատճառները, Անդրանիկի, նրա ուսուցիչների և հինակիցների սխրագործությունները։

Հ. Սիմոնյանի երկհատորյակը ամենամեծ ասքն է համայն հայոց զորավարի մասին։ Միանգամայն ճիշտ կլիներ, որ այդ արժեքավոր աշխատությունը հրապարակվեր ռուսերեն և այլ լեզուներով։ Դա անհրաժեշտ է, որպեսզի ոչ միայն հայը, այլ նաև աշխարհի մյուս ժողովուրդները համակողմանի պատկերացում ունենան հայ ժողովրդի միտքը, խիզախը, ազատության ու անկախության ոգին մարմնավորող Մեծ Մարդու՝ Անդրանիկի մասին։

Ս. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր